ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ «ԳԱՆԶԱՐԱՆԸ»

Է. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ մատենագրության նշանավոր դեմքերից է XIII դարի երկրորդ կեսի հեղինակ Մխիթար Այրիվանեցին։ Նրա թողած գրական ժառանգությունը բովանդակում է պատմագրական-վարքագրական երկեր, ինչպես նաև Գանձեր (հոգևոր բանաստեղծություններ) և տաղեր։ Հայագիտության մեջ փոքր ի շատե գնահատվել են նրա պատմագրական երկերը, մինչդեռ չափածո գործերը, ուշադրության արժանանալով հանդերձ[1], հատուկ քննության չեն ենթարկվել։ Այրիվանեցու չափածոն ժամանակին մի ամբողջություն է եղել, ստեղծվել է որպես հատուկ մի Գանձարան (հոգևոր բանաստեղծությունների հավաքածու) և խոշոր դեր է խաղացել նույնատիպ ժողովածուների դարգացման գործում։

Այրիվանեցու Գանձարանը ձեռք բերելու հատուկ նպատակով է, որ Գանձարան-ժողովածուների ձևավորման աշխատանքներին իրեն նվիրաբերած մատենագիր Գրիգոր Խլաթեցին 1387 թ. Վասպուրականից ուղևորվում է Այրիվանք, գտնում է այն, ընդօրինակում և օգտագործում Գանձարանների իր նոր խմբագրություններում։

Պետք է նկատել, սակայն, որ ինչպես այդ նախնական Գանձարանը, այնպես էլ նրանից կատարված անմիջական ընդօրինակությունը մեզ չեն հասել։ Ուստի, ձեռնամուխ լինելով Մխիթար Այրիվանեցու գանձագրության բնագավառում կատարած աշխատանքների ուսումնասիրմանը, մեր նպատակն է՝ միջնադարյան ձեռագրերում պահպանված ընդօրինակությունների, համապատասխան վկայությունների, ինչպես նաև եղած մասնագիտական գիտողությունների և այլ նյութերի քննությամբ վերականգնել այդ անհայտ Գանձարանի մոտավոր պատկերը և դրանով իսկ պատկերացում ստեղծել նրա մեջ ընդգրկված ստեղծագործությունների վերաբերյալ։

Այս առումով որոշ հետաքրքրություն են ներկայացնում Մաշտոցի անվ. Մատենադարանի № 6529 ձեռագրի նյութերը, որոնց վրա ուշադրություն է հրավիրել Գ. Հովսեփյանը։ Այդ ձեռագրում պահպանված են Գանձարանի բովանդակության ցանկը՝ համառոտակի նշումներով, Մխիթար Այրիվանեցու հորինած երգերից երկուսը, նրա չափածո հիշատակարանը և Գրիգոր Խլաթեցու՝ Մխիթար Այրիվանեցու Գանձերին առնչվող մեկ չափածո և երկու արձակ հիշատակարան-հիշատակագրությունները[2]։ Պակասավոր է Գանձարանի

---

1 Ա. Տ ե կ ա ն ց, Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ Թ։ Ղ. Ա լ ի շ ա ն, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 350—351։ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Մխիթար Այրիվանեցի..., Երուսաղեմ, 1931։ Հ. Ք յ ո ւ ր տ յ ա ն, Մխիթար Այրիվանեցի, «Բազմավեպ», Վենետիկ, 1933, էջ 38։ Պ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 68։

2 Դրանք բոլորն էլ հրատարակված են Գ. Հովսեփյանի «Մխիթար Այրիվանեցի» աշխատության մեջ։

ցանկը՝ ձեռագրից մեկ թերթ ընկած լինելու պատճառով։ Պահպանված մասերից տեղեկանում ենք, որ ձեռագիրը նախնական վիճակում պարունակել է շուրջ 100 միավոր Գանձեր, որոնց թվում եղել է նաև Մխիթար Այրիվանեցու Գանձերի հիմնական խումբը՝ այլ հեղինակների Գանձերի և տաղերի հետ միահյուսված։

Չնայած իր թերի վիճակին, № 6529 ձեռագիրը մեզ համար ևս ունի եկեղեցական նշանակություն։ Այստեղից ենք մենք քաղում այն փաստերը, որ Մխիթար Այրիվանեցին 1286 թ. կազմել է իր Գանձարանը, իսկ նրանից 100 տարի անց, Գրիգոր Խլաթեցին Այրիվանքում հանդիպել է այդ ձեռագրին։ Ուշագրավ է նաև ձեռագրում պահպանված այն փաստը, ըստ որի Մխիթար Այրիվանեցու Գանձարանում եղել է 21 Գանձ և 2 երգ։

Ասվածից հասկանալի է, որ եթե հնարավոր լիներ որևէ եղանակով պարզել № 6529 ձեռագրի երբեմնի բովանդակության մանրամասնությունները, ապա կբացահայտվեր նաև Մխիթար Այրիվանեցու 1286 թ. հորինած Գանձարանի մոտավոր պատկերը։

Այդ նպատակով մեր կատարած որոնումները բաց արին Մխիթար Այրիվանեցու Գանձերի ու վերոհիշյալ ժողովածուի մասին պատկերացում կազմելու մի նոր ճանապարհ։

Ինչպես հայտնի է, Մխիթար Այրիվանեցին ևս սիրել է ծայրակապով գրելու արվեստը։ Վաղուց են հայտնի այդ եղանակով գրած նրա մի շարք Գանձերը։ Սակայն այժմ, նրա Գանձերի ուսումնասիրության ժամանակ բացահայտվեց մեկ այլ, առավել կարևոր օրինաչափություն։ Պարզվեց, որ Մխիթար Այրիվանեցին իր Գանձերի հիմնական շարքը (15 գանձ) գրել է մի ընդհանուր ծայրակապով, որը կազմում է իմաստավոր և ամբողջական նախադասություն։ Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ հեղինակն այդ եղանակով մեզ է կտակել իր Գանձերի և Գանձարանի ամբողջական պատկերը վերականգնելու բանալին։

Երբ Գանձարաններից անջատում ենք Մխիթար Այրիվանեցու Գանձերը՝ հերթական հաջորդականությամբ, ապա ինքնին վերականգնված ենք գտնում նրանց ընդհանուր ծայրակապի մոտավոր պատկերը։ Հարցի քննությանը օգնում են հատկապես այն Գանձարանները, որոնց մեջ Մխիթար Այրիվանեցու Գանձերի թիվը տատանվում է 12-ից 18-ի միջև։

Ծայրակապային նշված շղթան հանդիպում է հիմնականում երեք տարբերակով։ Առաջինի լավագույն օրինակը № 4011 ձեռագիրն է (նրան են հարում №№ 2736, 4976, 426, 424 Գանձարանները)։ Նրանում Մխիթար Այրիվանեցու Գանձերի շարքը ավելի նախնական է և վստահելի։ Ճիշտ է, այստեղ էլ առկա են աղավաղումներ, որոնք մասամբ խախտում են ծայրակապերի իմաստը և շփոթություն մտցնում գանձարանակի հաշվի մեջ, սակայն դրանք վերականգնվում են մյուս ձեռագրերի օգնությամբ։ Ահա Մխիթար Այրիվանեցու այդ ձեռագրի մեջ գրիվ եկած 17 Գանձերի ընդհանուր նախադասություն կազմող ծայրակապը (փակագծերի մեջ տալիս ենք աղավաղված բառերի ճշտումները).

«(Տէ)ր Միիթարա + վարդայպետի + բայիւ երգել + հինգոտասան + բան Քարոզի (Քարոզից) + Աարիվանեցի (Այրիվանեցի) + Երամեցին (Երեւանեցին) + Մերզան + ցէտ իրով (հայցէ. սիրով) + զպակասորդ + աերունա-

նահ + վկայականաց + տց (տաւնից ասել) + խորհիրդոցն (խորհրդոցն) + ի փայլրս տեաչն (ի փառս տեառն) + վեշտասանք է + (ճգնաւորք)[3] + Սարգիս գրիչ:

Երկրորդ խմբի մեջ են մտնում Մատենադարանի № 4844 Գանձարանը[4] (նրան հարազատ են №№ 7785, 3540, 8251, 5521 Գանձարանները)։ Այստեղ Մխիթար Այրիվանեցու 17 Գանձերի ծայրակապերը հողում են. «Տէր Մխի-թ(արա) + (վարդ)այպետի + բայիւ երգել + հինգէտասան + վեշտասանք է + ի փառս տեառն + բան քարոզից + Այրիվանեցի + Երեւանեցին + հայցէ սի-րով + զպակասորդք + տերունական + վկո(ա)յականաց + տտացի (տաւնից ասել) + խորհրդոցն + ճգնաւորք + Սարգիս գրիչ»:

Երրորդ խմբում է Մատենադարանի № 5785 Գանձարանը (այս խմբին են պատկանում №№ 428, 425, 5328, 429 ձեռագրերը)։ Այստեղ գտնվող 18 Գան-ձերի ծայրակապն է. «Ի փառաստ տիեառն (ի փառս տեառն) + վէշտասանք է + ճգնաւորք + Սարգիս գրիչ + Տէր Մխիթարա + վարդայպետի.+ Բայիւ եեգրգել (երգել) + հգստաան (հինգտասան) + բան քարոզից[5] + Այրիվա-նեցի + Երեւանեցին + մեր բան + հայցէ սիրով + զպակասորդք + տէրու-նական + վկայականաց + տաւէցս նիցայ (տաւնից ասել) + խորհրդոցն»:

Ինչպես տեսնում ենք, ծայրակապային այս երկու խմբերից առավել կա-նոնավոր և տրամաբանական տեսք ունեցողը առաջին խումբն է։ Այստեղ շարքը սկսվում է «Տէր Մխիթարա» ծայրակապն ունեցող Գանձով՝ նվիրված «Աստուածայայտնութեան ճրագալուցի» տոնին, որը տոնացույցի համաձայն գլխավորում է Գանձերի տոնական շարքը։ Դրա համապատասխան շարքի վերջին Գանձն էլ հողում է «Ի փառս տեառն» բառերը և ամփոփում նախա-դասության միտքը։

Փոքր ինչ այլ է պատկերը մյուս երկու խմբերում։ Երրորդ խմբի առաջին շարքը ստեղծված է առաջին խմբի վերջին միավորների տեղաշարժումով, որի հետևանքով այն բառերը, որոնցով պետք է ավարտվեր նաև երրորդ խմբի ծայրակապային նախադասությունը, այստեղ հանդիսանում են սկիզբ։ Երկ-րորդ խմբում նորից նույն հատվածն է տեղաշարժվում, այս անգամ փոքր-ինչ այլ ձևով։ Հետևապես, անառարկելի է դառնում այն փաստը, որ երեք խմբերից հեղինակային բնագրին մոտ պետք է համարել առաջին խմբի ծայ-րակապային շղթան։ Այս իրողությունն ավելի անտարակուսելի կդառնա ստորև, երբ կքննենք առաջին խմբի ձեռագրերը ներկայացնող № 4011 Գան-ձարանի այլ արժանիքները։

Արդ, ի՞նչ է ասում ծայրակապային այդ ընդհանուր նախադասությունը։ Այն փաստորեն բաղկացած է երեք մասից, որոնցից առաջինում կարդում

---

3 «Ճգնաւորք» ծայրակապով Գանձը № 4011 ձեռագրում պակասում է։

4 Այստեղ ընդօրինակված են նույն հեղինակի ևս երկու Գանձերը, որոնք, սակայն, ծի-սական բնույթի են, ունեն «Տէր Մխիթար վ», «Տէր Մխիթարա» ծայրակապերը և չեն մտնում ծայրակապերի հիշյալ խմբի մեջ։

5 Մխիթար Այրիվանեցու «Այաշխարութեան» Գանձը Գանձարաններում ունի «Մեր գանձ անրացատրելի ծայրակապը։ № 5785 Գանձարանի գրիչ Կարապետ Բաղիշեցին փորձել է ճշտել ծայրակապի իմաստը։ Այդ նպատակով նա «զրխումն» տեակապ կազմող բառից առանձնացրել է «գ» տառը և գրել լուսանցքում. թողնելով «րխումն» բառը, որով ծայրակապը կարդացվում է՝ «մեր բան»։ Նշված ծայրակապը հիշյալ խմբի Գանձարաններում հանդիպում է ընդօրինակ-ված նաև շղթայի վերջում։

Նոր. «Տէր Մխիթարու վարդապետի բայլի երգել հնգետասան բան Քարոզից»։ Ինչպես հայտնի է, հետագայի Գանձարաններում Գանձերը կոչվել են նաև «քարոզ», «ճառ», «կանոն»։ Հետևապես այս նախադասության մեջ եղող «քարոզ» բառը պետք է հասկանալ «Գանձ» իմաստով։ Ուրեմն, համաձայն այս հաղորդման, Մխիթար վարդապետը գրել է «բայլի», այն է՝ եղանակով 15 Գանձ։

Նախադասության երկրորդ մասի ծայրակապերը շարահարում են. «Այրիվանեցի-Երևանեցին հայցէ սիրով՝ զպակասորդք տերունական-վկայական-նաց տաւնից ասել, խորհրդոցն, ի փառս տեառն»։ Ավարտուն մի նախադասություն, որտեղ Մխիթար Այրիվանեցին, որ կոչվել է նաև Երևանեցի[6], սիրով խնդրում է լրացնել տերունական, վկաների տոներին և այլ խորհուրդներին նվիրված Գանձերի պակասորդները։

Ծայրակապային նախադասության երրորդ հատվածն ասում է. «Վէշտա-սանք է, ձգնաւորք, Սարգիս գրիչ»[7]։ Դա արդեն թվում է ընդհանուր շարքին

---

6 Մխիթար Այրիվանեցու կենսագրությունից հայտնի չէ Երևան քաղաքի հետ կապված որևէ տեղեկություն։ Այս առումով «Բուն բարեկենդանին» Գանձի «Երևանեցին» ծայրակապը ունի բացառիկ նշանակություն։ Նորագույն շրջանի Գանձարաններում այն հանդիպում է «Երաւ-մեցին», «Երևանեցին», «Երեէւանեցին», «Երեւանեցին», իսկ Երուսաղեմի № 231 Գանձարա-նում՝ նաև «Երզւանեցին» ձևերով, որոնք առաջացել են Գանձի սխալ ընդօրինակումից։ «Երե-ւանեցին» ծայրակապը Մխիթարի «Սրբոց հայրապետացն երեք ժողովոյն» Գանձի «Այրիվա-նեցի» ծայրակապի հետ իր վրա է բևեռել դեռևս միջնադարյան գրիչների ուշադրությունը։ Նրանք ընդունել են, որ երկու ծայրակապային անուններն էլ վերաբերում են Մխիթարին և Գանձերի խորագրերում վերջինիս կոչել են մերթ «Այրիվանեցի» մերթ «Երևանեցի», այս կա-պակցությամբ տողատակերում թողնելով նաև համապատասխան նշումներ։ Այսպես, Մատե-նադարանի № 7785 Գանձարանի «Բուն բարեկենդանին» Գանձի խորագրում կարդում ենք. «Բուն բարեկենդանին եւ աշուհացից կիրակէիցն Մխիթար վարդապետի ասացեալ Երևա-նեցւոյ» (թերթ 139ա), իսկ տողատակում կրկնելով նույնը, գրիչը Երևանեցին փոխարինել է Այրիվանեցիով. «... ասացեալ Այրիօվանեցւոյ» (թերթ 140ա)։ Փորձելով բացատրել նաև եր-կու անունների առնչությունը, ձեռագրերի գրիչները եկել են այն սխալ եզրակացության, որ «Երևանեցի» կամ «Էրևանեցի» անունը ծագել է Էրիվանը (նույն Այրիվանը) տեղանունից։ Նման միտք է արտահայտում, օրինակ Մատենադարանի № 427 ձեռագրի «Բուն բարեկենդա-նին» Գանձի տողատակում գրչի կողմից արված հետևյալ նշումը. «Ո՛վ եղբայր, տան առաջքն Երևենեցի է, որ է Այրիվանս» (թերթ 128ա)։ Երկու տեղանունների նույնացումից է ծագել և Գանձերի խորագրերում մուտք գործել այն սխալը, ըստ որի Մխիթարը եղել է նաև «Երևանի առաջնորդ»։

Մխիթար վարդապետի անվան առնչությունը Այրիվանեցի և Երևանեցի անունների հետ հետաքրքրել է բանասերներից Ղ. Ալիշանին, որը, սակայն, հատուկ ուսումնասիրության նյութ չդարձնելով այն, որոշակի եզրակացության չի հանգել («Այրարատ», էջ 355)։ Այս հարցի իր պարզաբանումը ստացավ Գանձերի ծայրակապային շղթայի բացահայտման միջոցով միայն։ Այն փաստը, որ ծայրակապային շարքում, հեղինակային գասակարգմամբ «Այրիվանեցի-Երևանեցին» հաջորդում են միմյանց և լրացնում ու ամբողջացնում են նախադասության միտքը, վկայում է, որ դրանք օգտագործված են իբրև առանձին անուններ։

«Այրիվանեցի» ծայրակապը Մխիթարի անունը կապում է Այրիվանքի հետ, ուր նա անց է կացրել իր կյանքի երկրորդ շրջանը՝ ընդհուպ մինչև վախճանվելը, իսկ «Երևանեցին» հա-վանաբար, մատնանշում է նրա ծննդավայրը՝ Երևանը։

7 «Վեշտասանք է», «Ճգնաւորք», «Սարգիս գրիչ» ծայրակապերն ունեն իրենց առանձին բացատրությունը։ «Վեշտասանք է» ծայրակապով Գանձը նվիրված է «Ամենայն սրբոց հայ-րապետաց» տոնին։ Ծայրակապի բացատրությունը, հավանաբար, կապ ունի կրոնա-եկեղե-ցական որևէ հանգամանքի հետ։ Այս ենթադրության համար մեզ հիմք են տալիս Մխիթար

անհարիր, այնպես, ինչպես անհարիր է թվում երկրորդ հատվածի մեջ հանդիպող «Մեր զան» ծայրակապի իմաստը։

Հարց է առաջանում, արդյո՞ք նշված երեք հատվածները մի ամբողջություն են, թե այստեղ առկա է երեք տարբեր միավոր։ Այս հարցի լուծմանն օգնում է նախադասության առաջին հատվածը, ուր նշված է, որ շարքում առկա է «հինգոտասան բան քարոզից», այսինքն շարքը բաղկացած է 15 Գանձերից։ Ըստ այդմ, առաջին հատվածի հետ կապվող Գանձերի քանակը հավասար պետք է լիներ 15-ի, մինչդեռ նրանց թիվը 5 է։ Ուստի «հինգոտասան»-ը վերաբերում է ոչ թե առաջին հատվածին, այլ ամբողջին։ Սակայն նշված բոլոր հատվածները մի ամբողջական նախադասություն համարելու դեպքում էլ Գանձերի ընդհանուր քանակը 15-ից հասնում է 18-ի։ Ճիշտ է, դա համեմատաբար դյուրին կլիներ բացատրել, եթե հակասությունը լոկ քանակի մեջ լիներ, որովհետև խոսքը վերաբերում է 3—4 Գանձի՝ այդ շարքին օտար լինելուն։ Սակայն հետևելով նախադասության իմաստին, մենք ինքնաբերաբար տարակուսում ենք՝ իմաստային առումով նրա հետ չառնչվող հետևյալ չորս միավորների նկատմամբ. «Մեր զան», «ճգնաւորք», «վէշտասանք էն», «Սարգիս գրիչ»։ Դուրս թողնելով դրանք, ստանում ենք երկու հատվածներից կազմված մի լրիվ և ավարտուն պարբերություն, Բայց այստեղ էլ նկատելի է մեկ այլ խոչընդոտ. հեղինակը նշում է 15 Գանձ, մինչդեռ ստացվում է 14, պակասում է մեկ միավոր։ Հավանական է, որ հենց այդ կասկածելի 4 Գանձերից մեկն է որոնելին։ Բայց նրանցից և ոչ մեկի ծայրակապը ներկա վիճակով չի մերվում ընդհանուր նախադասությանը՝ առանց խաթա-

Այրիվանեցու մի ուրիշ Գանձի («Պետրոսի հայրապետին և Արիստակեսյան սարկավագին») հետևյալ տողերը.

Կարօեալ յաթոռին,
Դասս պատրիարգին,
Թիւ վէշտասանին... (Մատ., ձեռ. № 4068, էջ 222ա)։

Հայտնի է, որ «պատրիարգ» բառը օգտագործվել է նաև «հայրապետ» իմաստով։ Հայկազյան բառարանում կարդում ենք. «Պատրիարգ... որ ի սուրբ գիրս թարգմանի հայրապետ»։ Օրինակները վերցրած են նաև Մխիթար Այրիվանեցուց («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837, էջ 624)։ Հետևապես, Մխիթար Այրիվանեցու Գանձի նշված տողերը, որ ցույց են տալիս հայրապետների դասի թիվը, մենք կարող ենք ընդունել որպես «Վեշտասանք էն» ծայրակապի բացատրություն։

«Ամենայն սրբոց ճգնաւորաց» Գանձի «Ճգնաւորք» ծայրակապը շարահարում է Գանձի տոնական անունը։

«Սարգիս գրիչ» ծայրակապը, որը կազմում է «Սրբոց առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի» Գանձը, հոդում է ուրիշ անուն։ Դա տեղիք է տվել որոշ շփոթմունքի։ Գրիչներից ոմանք, Գանձարանների ցանկերում, որպես հեղինակ նշել են Սարգիս գրչին։ Երկմտանք առաջացնող այս ծայրակապի բացատրությունը գտնում ենք Մաշտոցի անվ. Մատենադարանի № 7785 Գանձարանում։ Այստեղ Գանձի խորագրում կարդում ենք. «Քարոզ Պետրոսի և Պաւղոսի առաքելոցն Քրիստոսի աստուծոյ մերոյ, ասացեալ Մխիթար վարդապետի, ի խնդրոյ Սարգիս գրչի»։ Իսկ տողատակում գրչի կողմից ավելացված է.

Արարեալ Մխիթար,
Ասացեալ Մխիթար,
Ոգեալ Մխիթար։

Հետևապես պարզվում է, որ ծայրակապը հոդում է խնդրատուի անունը։ Կարծում ենք, որ դա այն Սարգիս գրիչն է, որը նկարել է Մխիթար Այրիվանեցու կազմած ինքնագիր «ժամանակագրության» լուսանցազարդերը։

յելու նրա իմաստը։ Այդուամենայնիվ, անկախ այդ Գանձի ճշգրտումից, խընդիրը միանգամայն պարզ է. Մխիթար Այրիվանեցին մի ընդհանուր ծայրակապով գրել է 15 Գանձ, որոնք տեղադրված են եղել հատուկ հաջորդականությամբ և կազմել են մի ամբողջական շարք։ Սա հիրավի, կարևոր նշանակություն ունեցող փաստ է, որը մեզ հաղորդում է հեղինակային տվյալներ նրա Գանձարանի վերաբերյալ։ Ուստի անհրաժեշտ է զբաղվել այդ փաստի և դրա հետ առնչվող հարցերի քննությամբ։

Ինչպես ցույց տվեց վերևում բերված ձեռագրերի երեք խմբերի քննությունը, Մխիթար Այրիվանեցու Գանձերի ծայրակապային քննվող շղթան ավելի ամբողջական և համեմատաբար անաղարտ է առաջին խմբի ձեռագրերում, որոնցից հնագույնը № 4011 Գանձարանն է[8]։ Այս Գանձարանի քննությունը մեզ համար ստանում է կրկնակի նշանակություն, որովհետև այն նույնպես առնչվում է Գրիգոր Խլաթեցու անվանը և № 6529 ձեռագրին հարազատ ընդօրինակություն է[9]։ Գանձարանում ընդգրկված են 8 հեղինակների (Մխիթար, Մկրտիչ, Յոհաննես, Խաչատուր, Գրիգոր, Մատթէոս, Գևորգ, Դավիթ) 100 Գանձեր։ Ձեռագրի հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Բարեխաւսութեամբ սրբոյն Սարգսի զաւրավարի և ամենայն սրբոց նահատակութեամբ որ աստ կան հաւաքեալ, ողորմեա տէր գծողի սորա Գրիգորի»[10]։ Ենթադրում ենք, որ այդ Գրիգորը Խլաթեցին է։ Ձեռագրի գրչության տեղն ու թվականը անհայտ է։ № 6529 և № 4011 ձեռագրերի հարազատությունը առավել համոզիչ է դառնում, երբ ուշադրություն ենք դարձնում № 4011 ձեռագրի «կգբի 7 նյութերի վրա, որոնք ոչ այլ ինչ են, քան նույն միավորները՝ պահպանված № 6529 ձեռագրի բնկորում։ Դա ինքնին ենթադրել է տալիս, որ № 4011 ձեռագրի գանձարանային մասն էլ պետք է համապատասխաներ № 6529 ձեռագրի կորած գանձարանային մասին։ Այս կարծիքը լիովին հաստատվում է, երբ փորձում ենք առաջինի նյութերը համեմատել երկրորդից պահպանված ցանկի հետ։ Զուգադիպումները հետևողական են և համոզիչ։ № 4011 և № 6529 ձեռագրերը համապատասխանում են միմյանց ինչպես բովանդակած նյութերով, այնպես էլ նրանց հաջորդականությամբ։ Նկատվող մասնակի շեղումները արդյունք են վնասվածքների, հնչտությամբ բացատրվում են և հիմք տալիս համոզվելու, որ այդ երկու ձեռագրերը կամ ծագել են միմյանցից, կամ ունեցել ընդհանուր նախօրինակ։

Արդ, ե՞րբ են ստեղծվել այդ գանձարանները։ Նրանց մեջ պահպանված Գրիգոր Խլաթեցու հիշատակարանից և հիշատակագրություններից, ինչպես նաև մյուս նյութերից երևում է, որ նշված ձեռագրերը գրվել են 1399 թ. կամ այդ թվականից մեկ-երկու տարի հետո, որովհետև Գրիգոր Խլաթեցու հիշատակարանի պատմական մասն ավարտվում է 1399 թ. դեպքերի նկարագրությամբ[11]։ Սակայն, ստեղծվելով 1399 թ. հետո, այդ ձեռագրերն իրենց բովան-

---

8 Գանձարանի նկարագրությունը տե՛ս «Հնուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի», հատ. II, Երևան, 1970, էջ 1130։

9 Մեզանից առաջ այդ նկատել է նաև Ա. Մաթևոսյանը։

10 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4011, էջ 76ա։

11 №№ 6529 և 4011 ձեռագրերի ժամանակի ճշգրտմանն օգնում է Մատենադարանի № 3540 Գանձարանը, որի քննությունից պարզվեց հետևյալը։ Ձեռագիրը իր խմբագրությամբ մոտենում է Գրիգոր Խլաթեցու նշված Գանձարաններին, պարունակում է նրանց նյութերը՝ այդ թվում նաև Մխիթար Այրիվանեցու երկու երգերն ու հիշատակարանը, սակայն նրանց նկատ-

դակած նյութերով առնչվում են 1387 թ. Այրիվանքում Մխիթար Այրիվանեցու Գանձարանից Գրիգոր Խլաթեցու կատարած ընդօրինակությանը։ Այս առումով նոր բացահայտվող փաստերի շնորհիվ մեծ նշանակություն են ստանում Խլաթեցու չափածո հիշատակարանն ու արձակ երկու հիշատակագրությունները։ Չափածո հիշատակարանը սկզբում նվիրված է եղել միայն Մխիթար Այրիվանեցուն և Այրիվանքին, իսկ հետո, տարիներ անց շարունակվել է՝ ընդգրկելով նաև 1399 թ. վերաբերող դեպքերի նկարագրություն։ Ուստի, ու այսօր որպես մեկ ամբողջություն գիտված այդ հիշատակարանը բաղկացած է երկու տարբեր մասերից։ Սկզբի մասը, այսինքն բուն հիշատակարանը, ուր խոսվում է Այրիվանքի մասին, գրված է բավական սրտաբուխ, անմիջական տպավորությունների ազդեցությամբ, որպիսին կգրվեր ճանապարհորդությունից անմիջապես հետո և ոչ թե դրանից 12 տարի անց։ Ապա, չնայած հիշատակարանի երկու մասերը հաջողությամբ կապակցված են իրար, այնուամենայնիվ, առաջին մասի վերջին տողը ավարտվում է «ամէն» բառով, որը, ինչպես հայտնի է, նաև ավարտ է ազդարարում։ Ի վերջո, լրացուցիչ մի փաստ է նաև այն, որ հիշատակարանի առաջին մասում Գրիգոր Խլաթեցին իրեն հիշատակում է աբեղայի աստիճանով, մինչդեռ նույն ձեռագրում առկա հիշատակագրություններից վերջինում իրեն կոչում է վարդապետ, որպիսին էր նա հիշատակարանի երկրորդ մասի գրության ժամանակ։ Այս նկատառումները համոզում են, որ հիշատակարանի առաջին մասը գրվել է 1387 թ.՝ Այրիվանքի ձեռագրից կատարված ընդօրինակության վերջում, որտեղից և փոխանցվել է հիշյալ № № 6529, 4011 Գանձարաններին։ Այրիվանքի ընդօրինակությունից է փոխանցվել նաև Խլաթեցու հետևյալ հիշատակագրությունը. «Ի Ա գանձ կայ տէր Մխիթարայ Այրիվանեցոյն ի գիրքս և այս Ի երգս նորակէրտ գրոց և պատկերաց սրբոց։ Ջէ»։

Որպես նախօրինակի տարբեր պետք է դիտել նաև Մխիթար Այրիվանեցու՝ այս Գանձարաններում պահպանված հիշատակարանը, երկու երգերը և, որ գլխավորն է, Գանձերի հիմնական խումբը՝ հեղինակային դասակարգման պահպանմամբ։

Հետևապես № № 6529, 4011 Գանձարանները իրենց հիմքում ունենալով Մխիթար Այրիվանեցու կորած Գանձարանը, հնարավորություն են ընձեռում վերականգնելու դրա մոտավոր պատկերը։

Ի՞նչ կոնկրետ նյութեր է բովանդակել Մխիթար Այրիվանեցու Գանձարանը և ինչպիսին է եղել նրա կառուցվածքը՝ գանձարանային նյութերի համակարգի առումով։ Գրիգոր Խլաթեցու վկայությունների համաձայն Մխիթար

մամբ ունի նաև շեղումներ։ Դա վկայում է, որ ձեռագրի գրիչ Հովհաննեսը իր տրամադրության տակ ունեցել է երկու տարբեր Գանձարաններ, որոնցից մեկը հանդիսացել է Գրիգոր Խլաթեցու նշված խմբագրությունը։ Հովհաննես Գրչի հիշատակարանից պարզվում է, որ ձեռագիրն ընդօրինակվել է Գրիգոր Խլաթեցու իմացությամբ. «...դրեցաւ սա ի գաւառիս ի վանքս Ցիպնայ, ընդ հովանեաւ ամենազաւր Սուրբ Նշանիս... առ ոտս գերիմաստ և երանաշնորհ և արդիւնական հոետորիս՝ Գրիգոր վարդապետիս, ի փառս Քրիստոսի աստուծոյ» (թերթ 286բ), մինչդեռ մյուս երկուսի գրիչը Գրիգոր Խլաթեցին է։ Եվ քանի որ № 3540 ձեռագիրն ընդօրինակված է 1408 թ. և նախահիմք է ունեցել № № 6529, 4011 ձեռագրերը, ուստի վերջիններս էլ գրված պետք է լինեն 1399—1408 թթ. արանքում։ № 3540 ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց...». Ա, էջ 1037։ Ձեռագրի առաջին պրակը՝ թերթ 1—10, XVII դարի Տաղարանի մնացորդ է։

Այրիվանեցու Գանձարանը բաղկացած է եղել 21 Գանձից, 2 տաղից և հեղինակային չափածո հիշատակարանից[12]։ Դրանց մեջ հիմնական կորիզն է Գանձերի այն շարքը, որ շղթայված է մեկ ընդհանուր նախադատություն կազմող ծայրակապով։ Այնպես որ այժմ հնշտությամբ կարողանում ենք ճանաչել Մխիթար Այրիվանեցու 21 Գանձերից 14-ը, որոնց ծայրակապային այդ շղթան նրանց ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ.

1. «Տէր Մխիթարա»—Գանձ Աստուածայայտնութեան ճրագալուցին։
2. «Վարդայպետի»—Գանձ Պետրոսի հայրապետին և Աբիսողոմայ սարկաւագին։
3. «Բալիւ երգել»—Գանձ Անտոնի Անապատականի և այլ ճգնաւորաց։
4. «Հինգոտասան»—Գանձ ամենայն սրբոց թագաւորացն։
5. «Բան քարոզից»—Գանձ թարգմանչացն սրբոց Սահակայ և Մեսրոբայ։
6. «Այրիվանեցի»—Գանձ սրբոց հայրապետացն երեք ժողովոյն։
7. «Երեւանեցին»—Գանձ բուն բարեկենդանին։
8. «Հայցէ սիրով»—Գանձ ծաղկազարդին։
9. «Ջպակասորդք»—Գանձ աւագ հիգշաբաթին։
10. «Տերունական»—Գանձ թաղման ճրագալուցին։
11. «Վկայականաց»—Գանձ սրբոց կուսանացն Հռիփսիմեանց։
12. «Տաւնից ասել»—Գանձ որդոց և թոռանց սրբոյն Գրիգորի հայոց հայրապետի։
13. «Խորհրդոցն»—Գանձ սրբոց մարգարէիցն։
14. «Ի փառս տեառն»—Գանձ ամենայն սրբոց կուսանացն։

---

12 Մաշտոցի անվ. Մատենադարանում են պահվում Գրիգոր Խլաթեցու խմբագրած ինքնագիր չորս Գանձարաններ (№№ 8366, 6529, 4011, 5328), որոնց մանրազնին ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը. Այրիվանք այցելելուց և Մխիթար Այրիվանեցու Գանձարանը ձեռք բերելուց դեռևս շատ առաջ, Գրիգոր Խլաթեցին մեծ նշանակություն է տվել Մխիթար Այրիվանեցու Գանձերին, ձեռքի տակ ունեցել է նրանց աղավաղված օրինակները և դրանք օգտագործել է Գանձարանների իր անդրանիկ խմբագրություններում։ Սակայն, շրջավարվելով եղածներով, Գանձերի ամբողջական օրինակներ ձեռք բերելու նպատակով, շարունակ տենչացել է լինել Այրիվանքում, որը իրագործել է 1387 թ.։ Դրանից հետո, մեծապես օգտագործելով Մխիթար Այրիվանեցու ինքնագիր Գանձարանը, նա խմբագրել է նոր գանձարաններ։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Գրիգոր Խլաթեցու գանձարանային աշխատանքները անցել են զարգացման երկու շրջան՝ մինչև 1387 թ. և դրանից հետո։ Առաջին շրջանին է պատկանում № 8366 Գանձարանը, որը մեզ հայտնի է միակ օրինակով։ Գանձարանի խճողուն, համեմատաբար նախնական տեսքը, Մխիթար Այրիվանեցու այնտեղ գետեղված Գանձերի անճանաչելի աղավաղումները, պակասավոր բնագրերը, Գանձերի քիչ քանակը, ինչպես նաև Գանձարանի հեղինակի՝ Գրիգոր Խլաթեցու իսկ Գանձերի թերավարտ վիճակը վկայում են, որ դա Գրիգոր Խլաթեցու խմբագրած Գանձարաններից անդրանիկն է, որի ժամանակը պետք է որոշել 1361—1387 թթ. միջև։

Երկրորդ շրջանի՝ 1387 թ. հետո կատարված աշխատանքի արգասիք են №№ 6529, 4011 և 5328 Գանձարանները։ Ուշագրավ է, որ վերջիններս առաջացել են Մխիթար Այրիվանեցու անհատական Գանձարանի և № 8366 Գանձարանի նյութերի միաձուլումից, ավելացրած նաև ժամանակակից մի քանի գանձագիրների (Մատթեոս Ջուղայեցի, Գրիգոր Խլաթեցի, Առաքել) ստեղծագործությունները։ Երկրորդ շրջանի Գանձարանները, համարվելով լավագույն խմբագրություններ, սկզբնավորում են նմանօրինակ ժողովածուների զարգացման բարձր՝ նորագույն շրջան։

Գանձերի այս խումբը ոչ թե Գանձերի խառը հավաքածու է, այլ տոնական կայուն դասավորություն ունեցող մի ամբողջական շարք։ Այստեղ ևս, ինչպես և Տոնացույցում, տոնական շարքը սկսվում է «Աստվածահայտնության ճրագալուցին» տոնով, որին հաջորդում են մեկ միասնություն կազմող ծայրակապային շղթայի մյուս Գանձերը՝ չխախտելով տոնական կարգը[13]։

Այսպիսով, մեզ համար պարզ են դառնում Մխիթար Այրիվանեցու ինքնագիր Գանձարանի սկզբի 14 նյութերը, որին գլխավորել է «Աստուածահայտնութեան ճրագալուցին» տոնը, Հայտնի է նաև Գանձարանի վերջին նյութը, դա նրա չափածո հիշատակարանն է, որը նույնպես պահպանվել և հասել է մեզ։

Այժմ մնում է պարզել, թե որոնք են Մխիթար Այրիվանեցու Գանձարանի մյուս 7 Գանձերը, որոնցով նրանց քանակը կդառնար 21 և կհամապատասխաներ Գրիգոր Խլաթեցու հաղորդած տվյալներին։

Վերևում քննված ձեռագրային շարքերը մեզ, որպես այդպիսի միավորների ներկայացրին հետևյալ 4 Գանձերը.

1 (15) «Վէշտասանք է»—Գանձ ամենայն սրբոց հայրապետաց։

2 (16) «Ճգնաւորք»—Գանձ ամենայն սրբոց ճգնաւորաց։

3 (17) «Մերզան»—Գանձ վեցերորդ կիրակէին։

4 (18) «Սարգիս գրիչ»—Գանձ առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, որոնք իրենց ընդգրկած տոներով կարծես կոչված են լրացնելու հիմնական խումբը և պատահական չէ, որ համարյա ամենուր հանդիպում են հիշյալ ծայրակապերով շարքի հետ միասին։

Այս Գանձերից բացի, սակավաթիվ Գանձարաններում հանդիպում են Մխիթար Այրիվանեցու վերևում նշված երեք նորահայտ Գանձերը.

5 (19) «Կիրակե»—Գանձ յարութեան։

6 (20) «Տէր Մխիթար վ»—Գանձ երրորդ աւուրն գալըստեան Հոգոյ և աւրհնութիւն Ձիթոյ։

7 (21) «Տէր Մխիթարա»—Գանձ նորակերտ գրոց աւրհնելոց է։

Սրանցով ծայրակապերի ընդհանուր շարքից դուրս հայտնի Գանձերի թիվը դառնում է 7 միավոր, հետևաբար կարող ենք ասել, որ Գանձարաններում Մխիթար Այրիվանեցու անունով հայտնի Գանձերի թիվը հավասար է 21-ի և համապատասխանում է Գրիգոր Խլաթեցու հաղորդած տեղեկությանը։

Այժմ անդրադառնանք Մխիթար Այրիվանեցու Գանձարանի բնույթին, այն է՝ Գանձերի և տաղերի հարաբերությանը՝ գանձարանային համակարգի առումով։

Ինչպես հայտնի է, Գանձարան-ժողովածուներն իրենց վերջնական տեսքն ստանալուց առաջ անցել են զարգացման երկար ուղի։ Հայտնի է միայն,

---

13 Ծայրակապային երկրորդ նախադասությունում հեղինակը հայտնում է, որ իր Գանձերի այդ խումբը չի ընդգրկում տերունական և վկաների, սրբերի բոլոր տոները և խնդրում է հաջորդներին լրացնել։ Ուստի ձեռագրերում, Մխիթար Այրիվանեցու Գանձերի արանքներում, տոնական հաջորդականությամբ պետք է հայտնվեին նորանոր Գանձեր, չխախտելով, սակայն, Մխիթար Այրիվանեցու Գանձերի տոնական շարքը։ Եվ իսկապես, մենք այդ տեսնում ենք նրանից հետո մեզ հասած թե՛ հին, թե՛ նոր շրջանի համարյա բոլոր Գանձարաններում։ Համոզվելու համար բավական կլիներ հետևել N 4011 ձեռագրում առկա Գանձերի խորագրերին, որոնք միմյանց են հաջորդում տոնական հետևյալ կարգով. «Աստվածայայտնութեան ճրագալուցին», «Առաջին աւուր ծննդեանն Քրիստոսի աստուծոյ մերոյ...» և այլն։

որ նախնական շրջանից հետո, Գրիգոր Խլաթեցու խմբագրությամբ ստեղծվեցին որոշակի համակարգ ունեցող Գանձարաններ։ Այստեղ, որպես կանոն, նյութերը դասավորված են ըստ եկեղեցական տոնական կարգի, ամեն տոնի նվիրված է մեկ Գանձ, իսկ այդ Գանձին կցված է մի տաղ՝ իր հորդորակով, հաճախ էլ մեղեդիով։

Իսկ ինչպիսի՞ն է եղել Մխիթար Այրիվանեցու Գանձարանն այս առումով։ Վերևում խոսվեց այն մասին, որ Մխիթար Այրիվանեցու Գանձարանում առկա է երկու երգ. դրանք երեք դանձարաններում (№№ 6529, 4011, 3540) տեղ գտած օրհնության երգերն են[14].

1. Տէր Մխիթարայ ասացեալ վասն պատկերաց սրբոց—*Մին միածին Հայր որդի... («Մխիթարբ»).*

2. Նորին տեառն Մխիթարայ հոգելի եւ բանիբուն վարդապետի ասացեալ վասն աւրհնութեան նորակերտ զրոց—*Մեծապայծառ ցրնծութեամբ... («Մխիթար»).*

Սրանցից բացի, ձեռագրերից մեզ հայտնի դարձան նրան պատկանող ևս երկու տաղեր.

3. Տէր Մխիթարայ Այրիվանեցւոյ— *Արքայն երկնից խոնարհեալ... («Ա—Ք»).*

4. Տաղ փոխման սուրբ աստուածածնի ի Մխիթար վարդապետէ—*Սուրբ աստուածածնին կուսին...*

Նշված տաղերը, սակայն, չունեն իրենց համապատասխան Գանձերը։ Դա հիմք է տալիս համոզվելու, որ Մխիթար Այրիվանեցու Գանձարանը բաղկացած է եղել միմիայն Գանձերից, որոնք չեն ենթադրել տաղային միավորներ. գեթ այդ Գանձարանում, ինչպես որ տեսնում ենք Գրիգոր Խլաթեցու գանձարաններում։ Ծայրակապը ցույց է տալիս, որ նրա մեջ ընդգրկված գանձերի արանքներում տաղեր չեն եղել, այլապես ծայրակապային նախադասությունն այլ կերպարանք կստանար։ Եվ եթե այդ հիմնական շարքը տաղային միավորներ չի ունեցել, ապա այդպիսիք պետք է լինեին նաև մյուս Գանձերը, որոնք հանդիպում են առանձին-առանձին։ Հետևապես Մխիթար Այրիվանեցու Գանձարանը բաղկացած է եղել լոկ Գանձերից։ Գուցե նա ունեցել է հատուկ Տաղարա՞ն, կամ առանձին տաղե՞ր, որոնք պետք է օգտագործվեին իր Գանձարանի հետ միասին, այդ մասին սակայն, չունենք որևէ տեղեկություն։

Ինչ վերաբերում է այդ Գանձարանում գտնվող երկու տաղերին՝ «Վասն պատկերաց սրբոց» և «Վասն նորակերտ զրոց», ապա դրանք կարոտ են հատուկ բացատրության։ Այրիվանեցու «Նորակերտ գիրք օրհնելոց» Գանձը (ձեռ. № 4844) այլ ձեռագրերում (ձեռ. №№ 6529, 4011 և 3540) ունի իր համապատասխան «Վասն աւրհնութեան նորակերտ զրոց» տաղը։ Ուշագրավ է այն, որ այս նույն ծեսի համար «Մաշտոցներում» Մխիթար Այրիվանեցու անունով կա նաև «Աղօթք նորակերտ գիրք աւրհնելոց»[15], որը համոզում է, թե Մխիթար Այրիվանեցին այդ երեք միավորները գրել է որպես մեկ ամբողջության մասեր։

---

14 Նշված երգերը № 6529 ձեռագրի հիման վրա հրատարակել է Գ. Հովսեփյանը իր «Մխիթար Այրիվանեցի...» աշխատությունում, ներկայացնելով իբրև Գանձեր։

15 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3987, էջ 229բ։

Այսպիսով, կարելի է մտածել, որ Մխիթար Այրիվանեցին ունեցել է Գանձից և տաղից բաղկացած որոշ միավորներ, բայց ոչ թե տոնական-գանձարանային, այլ ծիսական-մաշտոցային բնույթի, Իսկ դա ենթադրել է տալիս, որ Մխիթար Այրիվանեցու Գանձարանում պահպանված այդ տաղից բացի, ծիսական բնույթի մյուս տաղի («Վասն պատկերաց սրբոց») համար ևս կարող էր գրած լինել Գանձ, իսկ Գանձի («Աւրհնութիւն ձիթոյ») համար՝ տաղ, որպիսիք, սակայն, մեզ հայտնի չեն։ Դրանք միաժամանակ հուշում են Մխիթար Այրիվանեցու ստեղծագործությունների մի ուրիշ խմբի հավանական գոյության մասին՝ գրված ծիսական արարողությունների համար։ Այդտեղ նա, ըստ երևույթին, օգտագործել է և՛ Գանձ, և՛ տաղ, և՛ աղոթք։ Հնարավոր է, որ հետագայում երևան գան այդ երևույթը լուսաբանող նոր փաստեր։

Այսպիսով, տեսնում ենք, որ Մխիթար Այրիվանեցուց մեզ հայտնի 21 Գանձերի հիմնական խմբում եղել են տերունական, վկաներին և սրբերին նվիրված 19 Գանձեր, իսկ մյուս երկուսը ունեցել են ծիսական բնույթ։ Այդպիսի բնույթ են ունեցել նաև նշված երկու երգերը։ Ծիսական բնույթի Գանձերի և տաղերի առկայությունը Մխիթար Այրիվանեցու Գանձարանում, նրան տալիս է ինքնատիպ տեսք և այդ չորս միավորով յուրովի կապում «Մաշտոց» ժողովածուների և առհասարակ եկեղեցական ծիսարանների հետ։

Մխիթար Այրիվանեցու Գանձարանը պարունակել է միայն հեղինակի ստեղծագործությունները։ Այս կարծիքը հիմնավորող փաստ է Մխիթար Այրիվանեցու չափածո հիշատակարանը, որը պահպանված է հիշյալ նյութերի շարքում[16], Իսկ դա էլ վկայում է, որ իրոք, առկա է եղել ուրույն ձեռագիր՝ Մխիթար Այրիվանեցու Գանձերով, տաղերով և նշված հիշատակարանով։ Համոզվելու համար դիմենք հիշատակարանին, ուր հեղինակը նկարագրում է այդ ձեռնարկը ստեղծելու որոշ մանրամասնություններն ու դժվարություններ.

Ի յախտաժէտ ըստեանց նրնչեալ.
Սպիտակ գինիս այս նոր յայտնեալ.
Տէր Մխիթար ի ծոցս անկեալ.
Պտուղ-պտուղ զայս հաւաքեալ:
Յաստուածաշունչ գրոց առեալ.
Եւ ի բանից սրբոց քաղեալ.
Քան զզումարտակ ի մին շարեալ,
Եւ յեկեղեցու կոյրն կախեալ:
Արդ. զո՛ւք, որդիք մաւրս այս ընտրեալ,
Որք յետ մեր զայք յարկս այս սորբեալ.
Զմեզ յիշեցէք ի յաղաւթել.
Գրեյով զայս բանքս ի սրբագրել: ՉԼԵ (1286)[17]:

Հիշատակարանի երեք ընդօրինակություններում էլ (ձեռ. №№ 4011. 6529 և 3540) այն ունի խորագիր. «Սորին տեառն Մխիթարայ ասացեալ». ապա, հիշատակարանի առաջին տողերն անպայման հեղինակային խոսք են, որովհետև մեկ ուրիշ անձնավորություն, իր հեղինակավոր նախորդին դրվա-

16 Հիշատակարանը ընդօրինակված է նաև Բրիտանական թանգարանի № 54 Գանձարանում։
17 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6529, էջ 4ր։

տելիս, չէր օգտագործի «ախտաժէտ» (հիվանդոտ) բառը։ Միջնադարյան հեղինակներն ինքներն էին իրենց կոչում ախտաժետ, ապիկար և այլն։

Հիշատակարանում Մխիթար Այրիվանեցին գրում է իր հեղինակած Գանձերի ստեղծագործական դժվարությունների, Աստվածաշնչից և եկեղեցու հայրերի գործերից օգտվելու, առանձին ժողովածու կազմելու և այն եկեղեցուն նվիրաբերելու մասին։ Ընթերցողի համար պարզ է դառնում նաև այն, որ հեղինակը խոսում է միայն իր ստեղծագործություններից բաղկացած Գանձարանի մասին։ Ըստ այդմ հավաստի է դառնում, որ Մխիթար Այրիվանեցին անհատական Գանձարան-ժողովածուի հեղինակ է, իսկ Գանձարանն էլ իր թվագրությամբ («Զլե») հնագույնն է ցայժմ իրենց կառուցվածքով փոքր ի շատե հայտնի Գանձարաններից։

Այսպիսով, Մխիթար Այրիվանեցու Գանձերի ընդհանուր ծայրակապի բացահայտումը հնարավորություն է ընձեռում գտնելու այն հնագույն ձեռագիրը (N 4011), որտեղ համեմատաբար անաղարտ են պահպանվել նրա երբեմնի Գանձարանի նյութերը՝ հեղինակային դասակարգմամբ։ Քննության համար հիմք ընդունելով հատկապես այդ Գանձարանը, ինչպես նաև Մխիթար Այրիվանեցու և Գրիգոր Խլաթեցու՝ նրա մեջ պահպանված վկայություն-հիշատակարանները, հնարավոր է դառնում վերականգնել Մխիթար Այրիվանեցու 1286 թ. ստեղծած անհատական Գանձարանի մոտավոր պատկերը, ինչպես նաև ճանաչել ու գտնել Մխիթար Այրիվանեցու վկայված 21 Գանձերը, 2 տաղերը և վերականգնել նրանց երբեմնի հաջորդականությունը՝ հեղինակային կորած ինքնագրում։ Այս փաստերը հիմք են տալիս Գանձարանների հայտնի խմբագրությունների թվում ճանաչելու ևս մեկ խմբագրություն՝ Մխիթարի խմբագրությունը։

«ГАНДЗАРАН» МХИТАРА АЙРИВАНЕЦИ

Э. О. АРУТЮНЯН

(Резюме)

Мхитар Айриванеци является одним из видных средневековых армянских авторов XIII в., литературное творчество которого мало изучено. Он известен в арменоведении как историк, составитель и переписчик Гомилиария, а также автор духовных песен — гандзов. В 1286 г. им был составлен не дошедший до нам сборник песен—«Гандзаран».

В статье собраны воедино все гандзы Мхитара Айриванеци, из коих четырнадцать связаны между собой акростихами, составляющими предложения, содержащие ценные авторские данные о написанном им «Гандзаране» (сборнике гандзов). Выявлено еще семь принадлежащих Мхитару Айриванеци гандзов, которые вместе с упомянутыми четырнадцатью входят в составленный Мхитаром «Гандзаран». Показано, что древнейший рукописный образец, сохранивший в сравнительно чистом виде гандзы Мхитара (рукопись Матенадарана № 4011), связан с именем автора XIV—XV вв. Григора Хлатеци, который переписал «Гандзаран» Мхитара и использовал его в своих произведениях.